ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-21/35»

ք. Երևան «20» 05 2021 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սևակ Վարդանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված վերականգնողական աշխատանքներ (ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Ճանապարհաշինարարներ» արձանի տարածքի բարեկարգում) (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից և **կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 150-րդ օրացուցային օրը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 4 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.12 Պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը, օգտագործելով սույն պայմանագրի հավելված N 1.1 ով սահմանված ռեսուրսները:

3.4.13 Պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված տեղեկանքի

պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **15 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝

վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 27154796 (Քսանյոթ միլիոն մեկ հարյուր հիսունչորս հազար յոթ հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ, որից 4525799 (Չորս միլիոն հինգ հարյուր քսանհինգ հազար յոթ հարյուր իննսունինը) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Սույն պայմանագրի 3.4.12 և 3.4.13 կետերով սահմանված պայմանների կիրառման դեպքում, եթե ներկայացված տեղեկատվությունը գնահատվում է սահմանված պահանջներին համապատասխանող, ապա ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով կապալառուին փոխհատուցվում է պայմանագրի գնի 1 տոկոսը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2, ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011034924 ՀՎՀՀ 02698732	«ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ» ՍՊԸ Հասցեն՝ Ք. Չարենցավան, Խանջյան փ. 2-րդ նրբ. 4 2 Հեռ.՝ (+374) 98-977-966 Էլ.փոստ՝ hayreni-tun@mail.ru «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Հ/Հ 220433330457000 ՀՎՀՀ 03024201
Գլխավոր քարտուղարի տեղակալ՝	**Տնօրեն՝**
---------- **Վ. Գասպարյան** (ստորագրություն) Կ.Տ.	---------- **Ս. Վարդանյան** (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված թիվ 1
«20» 05 2021թ. կնքված
«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-21/35» ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Չափաբաժին 1. Վերականգնողական աշխատանքներ

(ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Ճանապարհաշինարարներ» արձանի տարածքի բարեկարգում)

N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավորի գինը (հազար ՀՀ դրամ)	Գումարը (հազար ՀՀ դրամ)
1	2	3	4	5	6
	I. Բարեկարգում				
	Հարթակներ				
1	Հողային պաստառի հարթեցում մեխանիզմով	100մ2	22.00	70.000	1540.000
2	III կարգի գրունտի մշակում էքսկավատորով կողալիցքով	1000մ3	0.170	900.000	153.000
3	IV կարգի գրունտի մշակում էքսկավատորով կողալիցքով	1000մ3	0.035	960.000	33.600
4	Գրունտի մշակում ձեռքով	100մ3	0.500	220.000	110.000
5	Խճի նախաշերտի ստեղծում տոփանումով	մ3	50.50	8.000	404.000
6	Գրունտի հետլիցք տարածքում	100մ3	0.850	85.000	72.250
7	Ավելնորդ գրունտի բարձում ավտոմեքենայի	1000մ3	0.205	1000.000	205.000
8	Տեղափոխում 1 կմ	տ	348.00	0.900	313.200
9	Հատակների երեսապատում Բազալտե ջարդված սալիկներով	մ2	546	14.000	7644.000
10	Բազալտե 150x300 եզրաքարերի շար	100մ	2.12064	1000.000	2120.640
11	Քարե նստարաններ բազալտե 0.25 խմ	հատ	30.00	33.280	998.400
	Ընդամենը				**13594.090**
	Ընդամենը տոկոսներով				**66.681 %**
	Հարթակների համար սահմանված առավելագույն կշիռը՝				**66.68169 %**
	Ցանկապատ				
1	Գրունտի մշակում ձեռքով	100մ3	0.210	220.000	46.200
2	Խճի նախաշերտի ստեղծում տոփանումով	մ3	1.73	8.000	13.840
3	Գրունտի հետլիցք տարածքում	100մ3	0.133	85.000	11.305
4	Ավելնորդ գրունտի բարձում ավտոմեքենայի	1000մ3	0.008	1000.000	8.000
5	Տեղափոխում 1 կմ	տ	13.1	0.900	11.790
6	Ցանկապատի մետաղական մասերի մոնտաժ	տ	2.775	20.000	55.500
7	Պողպատե խողովակ 102x2.5	մ	144.00	2.600	374.400
8	Պողպատե թիթեղ 50x5 մմ	մ	43.20	1.076	46.500
9	Պողպատե անկյունակ 50x50x5	մ	488.80	1.800	879.840
10	պողպատե ցանկապատի ցանց 70x70 2մմ ցինկապատ	քմ	316.8	0.800	253.408
11	Մետաղական մասերի յուղաներկում երկու անգամ	100մ2	1.94	80.000	155.200
	Ընդամենը				**1855.983**
	Ընդամենը տոկոսներով				**9.103 %**
	Ցանկապատերի համար սահմանված առավելագույն կշիռը՝				**9.10390 %**
	Վերանորոգվող հենապատ				
1	Գրունտի մշակում ձեռքով	100մ3	0.600	220.000	132.000
2	Գրունտի հետլիցք տարածքում	100մ3	0.600	85.000	51.000
3	Պատերի ջրամեկուսացում մեկ շերտ իզոգամով 3 մմ	մ2	100.00	1.000	100.000
4	Բացակայող բազալտե սրբատաշ քարերի շար	մ3	1.5	55.000	82.500

5	Բազալտե վնասված քարերի ապամոնտաժում և վերատեղադրում	մ3	5.5	40.000	220.000
6	Բետոնե վերադիրների քանդում	մ3	5.5	8.000	44.000
7	Բազալտե 5սմ թասակների տեղադրում	100մ2	0.55	1000.000	550.000
8	Ճակատային մասի արտաքին պատերի շարվածքի կարերի գծամշակում	մ2	100.00	0.600	60.000
9	Հենապատի վերին շերտի հարթեցում ց/ա շաղախով	100մ2	0.450	229.778	103.400
	Ընդամենը				**1342.900**
	Ընդամենը տոկոսներով				**6.587 %**
	Վերանորոգվող հենապատերի համար սահմանված առավելագույն կշիռը՝				**6.58712 %**
	Նոր կառուցվող հենապատ				
1	III կարգի գրունտի մշակում էքսկավատորով կողալիցքով	1000մ3	0.041	900.000	36.900
2	Գրունտի մշակում ձեռքով	100մ3	0.06	220.000	13.200
3	Գրունտի հետլիցք տարածքում	100մ3	0.470	84.362	39.650
4	Խճի նախաշերտի ստեղծում տոփանումով	մ3	2.00	8.000	16.000
5	Խամքարաբետոնե հիմքերի իրականացում B-12.5 դասի	մ3	6.00	23.000	138.000
6	Խամքարաբետոնե հենապատի իրականացում B-12.5 դասի բետոնից	մ3	9.00	23.000	207.000
7	Պատերի երեսպատում բազալտե 50 մմ սալերով	100մ2	0.28	1500.000	420.000
8	Բազալտե 5սմ թասակների տեղադրում	100մ2	0.15	100.000	15.000
9	Բազալտե 150x300 եզրաքարերի շար	100մ	0.28	1000.000	280.000
10	Խճի նախաշերտի ստեղծում տոփանումով	մ3	6.7	8.000	53.600
11	Խճե միաշերտ հիմնատակի իրականացում 12սմ հաստությամբ	100մ2	0.68	350.000	238.000
12	Բիտումի լցաբաշխում 4.12տ /1000մ2/	տ	0.280	500.000	140.000
13	Ծածկի իրականացում միաշերտ տաք խոշորահատիկ ա /բետոնով h=4սմ	100մ2	0.68	340.000	231.200
14	Ծածկի իրականացում միաշերտ տաք մանրահատիկ ա /բետոնով h=3սմ	100մ2	0.68	440.000	299.200
	Ընդամենը				**2127.750**
	Ընդամենը տոկոսներով				**10.437 %**
	Նոր կառուցվող հենապատերի համար սահմանված առավելագույն կշիռը՝				**10.43711 %**
	Մուտքային մաս				
1	Տուֆե պատերի քանդում 500 մմ հաստ.	մ3	1.5	17.250	25.875
2	Գրունտի մշակում ձեռքով	100մ3	0.09	220.000	19.800
3	Գրունտի հետլիցք տարածքում	100մ3	1.200	85.000	102.000
4	Խճի նախաշերտի ստեղծում տոփանումով	մ3	0.20	8.000	1.600
5	Խամքարաբետոնե հիմքերի իրականացում B-12.5 դասի	մ3	0.30	38.000	11.400
6	Խամքարաբետոնե հենապատի իրականացում B-12.5 դասի բետոնից	մ3	0.25	44.000	11.000
7	Պատերի երեսպատում բազալտե 50 մմ սալերով	100մ2	0.06	1500.000	90.000
8	Բազալտե 5սմ թասակների տեղադրում	100մ2	0.01	100.000	1.000
	Ընդամենը				**262.675**
	Ընդամենը տոկոսներով				**1.288 %**
	Մուտքային մասերի համար սահմանված առավելագույն կշիռը՝				**1.28876 %**
	Հիմքերի ուժեղացում				
1	Գրունտի մշակում ձեռքով	100մ3	0.24	220.000	52.800
2	Գրունտի հետլիցք տարածքում	100մ3	0.159	85.000	13.515
3	Խճի նախաշերտի ստեղծում տոփանումով	մ3	2.3	8.000	18.400
4	Հիմքերի ուժեղացում շապիկով B-20 դասի բետոնով	մ3	13.03	59.000	768.770

5	Ամրան A500C դասի 12մմ	տ	0.683	496.925	339.400
6	Ամրան Ac1 դասի 6մմ	տ	0.02	510.000	10.200
	Ընդամենը				1203.085
	Ընդամենը տոկոսներով				5.901 %
	Հիմքերի ուժեղացման համար սահմանված առավելագույն կշիռը՝				5.90141 %
	Ընդամենը				20386.484
	Ընդամենը տոկոսներով				100 %
	Շահույթ -				2242.513
	Ընդամենը				22628.997
	ԱԱՀ - 20%				4525.799
	Ընդամենը				27154.796

*** Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Կոտայքի մարզ, Երևան-Սևան մայրուղու Չարենցավան քաղաքին հարող տարածքում:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Վ. Գասպարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

---------- Ս. Վարդանյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1.1
«20» 05 2021թ. կնքված
«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-21/35» ծածկագրով պայմանագրի

ՑԱՆԿ

հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման

Չափաբաժնի N՝			
Օգտագործվելիք նյութերի			Աշխատակիցների քանակը, որոնց միջոցով պետք է ապահովվի պայմանագրի կատարումը
Անվանում	Քանակ	Գումար/դրամ	
խիճ	70մ³	672000	14 (տասնչորս)
Բազալտե սալեր	650մ²	6635000	
ցեմենտ	25 տ	1250000	
ամրան	700կգ	452000	
ա/բետոն	136մ²	706000	
Բազալտե եզրաքար	240մ	2040000	
Բազալտե նստարան	30 հատ	900000	
Բազալտե թասակներ	71մ³	497000	
Ավազ	40տ	448000	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վ. Գասպարյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Ս. Վարդանյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված թիվ 2
«20» 05 2021թ. կնքված
«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-21/35» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Չափաբաժին 1. Վերականգնողական աշխատանքներ

(ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Ճանապարհաշինարարներ» արձանի տարածքի բարեկարգում)

N	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետ	
		Սկիզբ	Ավարտ
	I. Բարեկարգման աշխատանքներ		
1	Հարթակներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 150-րդ օրացուցային օրը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում
2	Ցանկապատ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 150-րդ օրացուցային օրը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում
3	Վերանորոգվող հենապատ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 150-րդ օրացուցային օրը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում
4	Նոր կառուցվող հենապատ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 150-րդ օրացուցային օրը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում
5	Մուտքային մաս	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 150-րդ օրացուցային օրը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում
6	Հիմքերի ուժեղացում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 150-րդ օրացուցային օրը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում
	ԸՆԴԱՄԵՆԸ	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում**	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 150-րդ օրացուցային օրը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- **Վ. Գասպարյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

---------- **Ս. Վարդանյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 3
«20» 05 2021թ. կնքված
«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-21/35» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հրավերով նախա-տեսված չափա-բաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին, պետական բյուջեից՝ ըստ ամիսների, այդ թվում.*								
			մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45451600-2	**Վերականգնողական աշխատանքներ** (ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Ճանապարհաշինարարներ» արձանի տարածքի բարեկարգում)	5430959	5430959	19008357	19008357	19008357	27154796	27154796	27154796	27154796

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Ս. Վարդանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 4
«20» 05 2021թ. կնքված
«ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՁԲ-21/35» ծածկագրով պայմանագրի

ԿԱՊԱԼԻ ՕԲՅԵԿՏԻ, ԴՐԱ ԱՌԱՆՁԻՆ ՄԱՍԵՐԻ (ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐ և ԱՅԼՆ) ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼԻՔ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՍԱՐՔԵՐԻ ՈՒ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Չափաբաժին 1. Վերականգնողական աշխատանքներ
(ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Ճանապարհաշինարարներ» արձանի տարածքի բարեկարգում)

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Ճանապարհաշինարարներ» արձանի տարածքի բարեկարգման աշխատանքների կատարման ընթացքում կիրառվող նյութերն ու կոնստրուկցիաները պետք է ունենան 5 (հինգ) տարվա երաշխիքային ժամկետ:

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Ճանապարհաշինարարներ» արձանի տարածքի բարեկարգման աշխատանքների կատարման ընթացքում, նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող, սարքերի և սարքավորումների վերաբերյալ մասնակցին պահանջներ չեն ներկայացվում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Ս. Վարդանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

19 մայիսի 2021թ.
ք. Երևան

Թիվ 01-817

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
ԹԻՎ 21 18 40 643728/2

(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև կնքվելիք թիվ «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-21/35» պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել 2.715.480 (երկու միլիոն յոթ հարյուր տասնհինգ հազար չորս հարյուր ութսուն) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև կնքվելիք պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման վերջնաժամկետի, ներառյալ երաշխիքային ժամկետի օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ, քան 31 մարտի 2023թ.-ը ներառյալ: Սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-21/35» պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վաճառքների խթանման և ռեգիոնալ կառավարման
գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Ն. Նազարյան

Կատարող՝
Դավիթ Բարղության
Հեռ.՝ 010 31-88-88 (ներքին՝ 7091)

19 մայիսի 2021թ.
ք. Երևան

Թիվ 01-816

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
ԹԻՎ 21 18 40 643728/1

(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից թիվ «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-21/35» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից կնքվելիք թիվ «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-21/35» պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություն-ներ):

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 4.073.220 (չորս միլիոն յոթանասուներեք հազար երկու հարյուր քսան) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև կնքվելիք պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման վերջնաժամկետի օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ, քան 31 մարտի 2022թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-21/35» ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վաճառքների խթանման և ռեգիոնալ կառավարման
գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Ն. Նազարյան

Կատարող՝
Դավիթ Բարղության
Հեռ.՝ 010 31-88-88 (ներքին՝ 7091)